Հաշվետվություն
Իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի փորձագետ Լ. Գալստյանի (24.09.2025-24.12.2025թթ.) կատարած աշխատանքի մասին

Որպես Տարածքային կառավարման և ենթակառուվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի փորձագետ՝

1. տրամադրել եմ իրավական կարծիքներ՝ Նախարարության տարբեր բաժինների աշխատակիցներին՝ իրենց ծառայողական պարտականություններից բխող հարցերի իրավական կարգավորումների վերաբերյալ,
2. պատրաստել եմ պատասխաններ՝ ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների կողմից Նախարարությանը հասցեագրված կամ պետական մարմինների կողմից հանձնարարականով/առաջարկով Նախարարությանը հանձնված տարաբնույթ հարցերի իրավական կարգավորումների վերաբերյալ,
3. պատրաստել եմ պատասխաններ՝ ՀՀ վարչական կամ ՀՀ քաղաքացիական դատարաններում Նախարարության/Կառավարության (Վարչապետի հաձնարարականով) դեմ հարուցված հայցադիմումներում արտահայտված պահանջների վերաբերյալ,
4. պատրաստել եմ դիրքորոշումներ/միջնորդություններ՝ ՀՀ վարչական կամ ՀՀ քաղաքացիական դատարաններում Նախարարության/Կառավարության (Վարչապետի հաձնարարականով) մասնակցությամբ (որպես երրորդ անձ), քննվող դատական գործերի շրջանակներում,
5. պատրաստել եմ Նախարարության կողմից հարուցվելիք/հարուցված վարչական վարույթի իրականացման հետ կապված՝ համապատասխան ծանուցումները և որոշումների/հրամանների նախագծերը,
6. կատարել եմ ղեկավարության կողմից տրված տարբեր տեսակի հանձնարարականներ:

Իրավաբանական վարչության նախարարության
իրավական շահերի պաշտպանության
բաժնի փորձագետ՝ Լիլիթ Գալստյան

24.12.2025թ.